## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ

«04» Դեկտեմբերի 2020 թվականի N 51

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 – րդ հոդվածի 1 – ին մասի 24 – րդ կետին, 48 - րդ հոդվածի 1 - ին մասի 3 - րդ կետին, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24 – րդ հոդվածի 1 – ին մասի 3 կետին, Արևաշող համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 17 - ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 4 - Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 24 – ի թիվ 7 եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

2020 թ. Դեկտեմբերի 4
գ. Արևաշող

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի
2020 թվականի Դեկտեմբերի 4 – ի N 51 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/հ | Ազգանուն անուն հայրանուն | Տրամադրվող գումարը /թվով/ | Տրամադրվող գումարը /բառերով/ ՀՀ դրամ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Մանուկյան Թեհմինե Միշայի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 2. | Սարգսյան Արամայիս Ռաֆայելի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 3. | Պողոսյան Սուսաննա Անդրանիկի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 4. | Ավետյան Հովհաննես Ալբերտի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 5. | Մարտիրոսյան Հայկազ Սամվելի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 6. | Գյուլազյան Գառնիկ Ներսեսի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 7. | Մանուկյան Մանուկ Ալբերտի | 25000 | Քսանհինգ հազար | Հուղարկ. ծախս |
| 8. | Ընդամենը՝ | 175000 | Մեկ հարյուր յոթանասունհինգ հազար | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 Դեկտեմբերի 2020թ. թիվ 52

ԱՆԴՐԱՆԻԿ ԻՇԽԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տիմ օրենքի 42 – րդ հոդվածի առաջին մասի 6 – րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել իրականացնել Անդրանիկ Իշխանի Թադևոսյանին Լոռու մարզի Արևաշող համայնքում 1 Փ. 101 տուն հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ 0.067 հա հողամասի (ծածկագիր 06-021-0023-0005) շինարարական աշխատանքներ:
2. Հաշվապահին հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 18 – ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքի տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 39-Ն որոշումը գանձել տեղական տուրք 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ